

ԼԵՒՈՆ ՊԷՇԿԵԹՈՒՐԵԱՆ — Ծնած է Կիւրին 1890-ին, նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Աղզային Վարժարանին եւ ատեն մըն ալ Բողոքականաց դպրոցին մէջ: 1908-ի թրքական Սահմանադրութենէն ետք կ'երթայ Իզմիր, իր հօրեղբօր՝ Բրօֆ. Կարապետ Պէշկեթուրեանի մօտ, եւ անոր միջոցով թէ՛ կ'աշխատի եւ թէ՛ կ'ուսանի տեղւոյն Ամերիկեան Գոլէճին մէջ:

1910-ին կ'առնուի թրքական բանակին մէջ, կը մարզուի որպէս ժանտարմա եւ կը ղրկուի պաշտօնավարելու Հոռոս կղզիին վրայ, յունարէն լեզուին ծանօթ ըլլալուն պատճառով: Հոն կը ծառայէ երկու տարի: Միացեալ Նահանգներ կու գայ 1913-ին: Երբ Առաջին Համաշխարհային Պատերազմը կը ծաղի՝ Լեւոն Պէշկեթուրեան կամաւոր կը գրուի Ամերիկեան բանակին մէջ, եւ կը ղրկուի Եւրոպական ռազմաճակատը որպէս թնդանօթածիլ:

Ան իր կեանքի ամբողջ ընթացքին, իբրեւ գիտակից հայրենասէր, զործօն մասնակցութիւն բերած է ազդային եւ հասարակական բոլոր ձեռնարկներուն եւ շարժումներուն: Եռանդուն անդամ եղած է Ռ. Ազ. Կուսակցութեան, Հայկ. Բարեգործական Ընդհ. Միութեան, Վարդանանց Ասպետներու Եղբայրակցութեան եւ ուրիշ կազմակերպութեանց, պատասխանատու պաշտօններ վարելով բոլորին մէջ: Իր մասին բաւական տեղեկութիւններ կարելի է գտնել ամերիկահայ մամուլի էջերուն վրայ: Հաւանօրէն ունենայ յուշագրութիւններ: Անոնց հրատարակումը իսկապէս կրնայ հետաքրքրական ըլլալ բազմաթիւ կողմերով: Զեռքի տակ չկրցանք ունենալ իր նկարը:

Ա. ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԿԱՄԱԻՈՐ ԿԻՒՐԻՆՅԻ ՏՂՈՑ ՅԱՆԿԸ

Արեքնաճով Գիգիթեան	Սարգիս Թորոսեան
Ալեքսան Գլպաշեան	Սարգիս Պայլայեան
Եղիա Պանտայեան	Սարգիս Վէգիթեան
Թադէոս Մալխասեան	Սարգիս Քէհէեան
Կարապետ Պողոսեան	Սեդրակ Տատուրեան
Յակոբ Ճաննիկեան	Սեդրակ Կէօֆեան
Յակոբ Պոյանեան	Վաղարշակ Թովալթորոսեան
Յովհաննէս Դաւիթեան	Վարդան Ծառուկեան
Յովսէփ Գալաֆեան	Տիրան Ճէմնէմեան

ԱՄԵՐԻԿԱՅԷՆ ԵԿԱԾ ԿԻՒՐԻՆՅԻ ԿԱՄԱԻՈՐՆԵՐ  
(Ամէնէն ալ մասնակցած են Արարայի քաղաքամարտին)

- Սարգիս Աֆարեան
- Տիգրան Գայնաքեան (Սերժան)
- Մեսիա Խանդատեան (Տանապետ)
- Կարապետ Ճամուղեան
- Սարգիս Մարաշեան
- Արմենակ Պեկիրճեան
- Միհրան Փիլանեան